ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 2 նիստի, կայացած 2019թ նոյեմբերի 25 -ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 7 անդամներից 7-ը, ինչպես նաև Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված Հերհեր բնակավայրի վարչական ղեկավար Անդրանիկ Աբրահամյանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան / մարզպետ /
քարտուղար՝ Մ. Մեսրոպյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Մարգարյան
Ն. Բաբայան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Վ. Հովհաննիսյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Ջերմուկի համայնքի Հերհերի բնակավայրի 18 միավոր իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող 16.72հա / ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ ՍՊԸ- 3.55հա, ՍՈՒՆ ՍՈԼԱՐ ՍՊԸ – 5.95հա, ԱՅՍՈԼԱՐ ՍՊԸ – 4.87հա և ԱՐՄՍՈԼԱՐ ՍՊԸ -2.35հա / վարելահողերը փոխադրել խոտհարքների՝ չփոխելով հողակադաստրային գնահատման խմբերը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Ա. Գրիգորյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքները իրոք փաստացի խոտհարքեր են և ոչ թե վարելահողեր, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված տարածքները, որոնք հանդիսանում են իրավաբանական անձանց սեփականություն՝ դասել խոտհարքների շարքին: Առաջարկվեց Ջերմուկի համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանզնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Ջերմուկի համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում համայնքի 18 միավոր իրավաբանական սեփականություն հանդիսացող 16.72հա / ԴՈՒՍՏՐ ՍՈԼԱՐ ՍՊԸ- 3.55հա, ՍՈՒՆ ՍՈԼԱՐ ՍՊԸ – 5.95հա, ԱՅՍՈԼԱՐ ՍՊԸ – 4.87հա և ԱՐՄՍՈԼԱՐ ՍՊԸ -2.35հա / վարելահողերը փոխադրել խոտհարքների չփոխելով հողակադաստրային գնահատման խմբերը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել հողերի սեփականատերերին, համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Քարտուղար՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ